Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ավագանու
2020 թվականի հունիսի 10-ի N 100-Ա որոշման
«Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ավագանու
ՀԱՅՏ 2020 թվականի ապրիլի 10-ի N 47-Ա որոշման»

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական
ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

Ծրագրի անվանումը	Գյումրի քաղաքի երկրորդային 17 փողոցների հիմնանորոգում
Մարզ	Շիրակ
Համայնքը /համայնքները	Գյումրի
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	118 կմ, 0 կմ
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	113 525 մարդ
Սահմանամերձ, բարձր լեռնային համայնք /բնակավայրի	
Համայնքի բնակավայրի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն հստակ նշելով՝ - ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման տևողությունը, - գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը, - ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը,	Գյումրի քաղաքն ամբողջությամբ (100%) ապահովված է ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերով, առկա է 24 ժամյա ջրամատակարարում, որից օգտվում են բոլոր բնակիչները: Գերմանական KFW բանկի միջոցներով մետաղական հնամաշ խողովակները փոխարինվել են պլաստմասե խողովակներով՝ կազմելով քաղաքի ջրամատակարարման ցանցի 70%-ը: Քաղաքն ամբողջությամբ գազաֆիկացված է: Գազամատակարարման համակարգից օգտվող բնակչությունը կազմում է 95%: Ոռոգման համակարգից օգտվող բնակչության թիվը կազմում է 0% , քանզի քաղաքում ոռոգման ցանց չկա:

- լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ	Լրիվ կամ մասնակի փողոցային արտաքին լուսավորություն կա քաղաքի թվով 209 փողոցներից 193-ում, նրբանցքներում, փակուղիներում, անցումներում, որը կազմում է ընդհանուրի մոտ 93 %-ը: Լուսակետերի քանակը կազմում է մոտ 6800, որից էներգախնայող լամպերը կազմում են՝ մոտ 30 %, որն աստիճանաբար ավելացվում է: Միաժամանակ աշխատանքներ են տարվում ներթաղամասային բակային տարածքների լուսավորության ապահովման համար: 2019 թ. ՎԶԵԲ ֆինանսավորմամբ վերանորոգվել է 12 փողոց, մոտ 13,0 կմ երկարությամբ և 2 հրապարակ:Համաշխարհային բանկի վարկային միջոցներով՝ մոտ 2 կմ ճանապարհ և մասնակի՝ 2 հրապարակ, սուբվենցիոն ծրագրով՝ 4 փողոց՝ 5կմ ընդհանուր երկարությամբ:
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը	Ծրագրով նախատեսվում է Գյումրի քաղաքում հիմնանորոգել 17 փողոցների առանձին հատվածներ: Փողոցները հիմնականում չեն գտնվում Գյումրու պատմական կենտրոնում, հանդիսանում են երկրորդային փողոցներ և ընդգրկված չեն ՎԶԵԲ ֆինանսավորմամբ իրականացվող «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրով նախատեսված փողոցաշինական աշխատանքներում: Գյումրի քաղաքի փողոցների ընդհանուր թիվը (փողոցներ, նրբանցքներ, փակուղիներ) կազմում է 209, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է 181,0 կմ, այդ թվում՝ 1.բարեկարգված (որևէ ծածկույթ ունեցող)-152 կմ որից՝ ասֆալտբետոնե- 102 կմ խճից, կոպիճից մշակված փողոցներ- 50 կմ 2. հողային կամ ծածկույթ չունեցող-29 կմ Բոլոր փողոցների, անցումների, նրբանցքների, հրապարակների ընդհանուր մակերեսը (ծածկույթով և առանց ծածկույթի) 2.9 մլն մ2 է, որից բարեկարգված՝ 1.2 մլն մ2 : Հիմնանորոգվելու են փողոցների առանձին հատվածներ՝ իրենց հարակից մայթերով, որոնք ներթաղամասային փողոցներ են և որոնց հարող հատվածներում գործում են դպրոցներ և մանկապարտեզներ: Ծրագրով նախատեսված հատվածներում վերանորոգման աշխատանքներ կատարվել են շուրջ 40 տարի առաջ: Ընդհանուր ծավալը՝ 4585 մ ընդհանուր երկարությամբ և 39770 մ2 երթևեկելի մասով, 14430 մ2 մայթերով:

	Փողոցների երթևեկելի մասերում և մայթերում նախատեսվող աշխատանքների համապարփակ տեղեկատվությունը կից հավելվածում:
Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին	Ծրագրի իրականացման արդյունքում քաղաքի թվով 17 փողոցներ կլինեն բարվոք վիճակում, կազմելով ընդհանուր՝ 1. 4585 մ երկարությամբ և 39770 մ2 մակերեսով երթևեկելի ճանապարհներ: 2. 14430 մ2 մակերեսով հիմնանորոգված մայթեր Նախապես ընտրված հատվածները դեպի ենթակառուցվածքներ տանող ճանապարհներ են, որոնցով ամեն օր երթևեկում են հարյուրավոր քաղաքացիներ և մասնավորապես երեխաներ: Գյումրի համայնքի հնգամյա զարգացման ծրագրում (2017-2021) բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության ոլորտի կապիտալ ծրագրերում ներառված է «Փողոցների բարեկարգում» ծրագիրը, որը կազմվել է՝ ելնելով մի շարք առաջնահերթություններից, մասնավորապես՝ • դեպի մանկապարտեզ տանող ճանապարհներ • դեպի դպրոց տանող ճանապարհներ Ծրագրերի արդյունքում համայնքապետարանի գլխավոր նպատակն է ստեղծել նոր որակի քաղաքային միջավայր՝ հարմարավետ և անվտանգ տեղաշարժի ապահովմամբ և զբոսաշրջության գրավչության ավելացմամբ:
Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները	Ծրագրի սկզբնական փուլում կազմակերպվելու է գնումների գործընթաց՝ համապատասխան ընթացակարգով, այնուհետև ամփոփվելու են արդյունքները և հաղթող մասնակից (ների) հետ կնքվելու ենպայմանագրեր, որին հաջորդելու է աշխատանքների իրականացման փուլը: Իրականացվող աշխատանքների ընդհանուր ծավալը կազմում է4585 մ երկարությամբ և 39770մ 2մակերեսով երթևեկելի ճանապարհներ, ինչպես նաև 14430 մ2 մակերեսով հիմնանորոգված մայթեր: Աշխատանքների կատարմանժամկետի սկիզբը համարվում է պայմանագրի ուժի մեջ մտնելը և ավարտ՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտը՝ 30 (երեսուն) օրից , որը հաշվվում է պայմանագրով նախատեսված աշխատանքների մեկնարկի օրվանից: Ֆինանսավորումն իրականացվելու է ըստ փուլերի՝ ապրիլ-հունիս ամիսների ընթացքում:

	Իրականացվելու է վերահսկողություն և նախորդ փուլի աշխատանքների ընդունում:
Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի	Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում չի նախատեսվում:
Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա	Ծրագրի շահառուներն են Գյումրի քաղաքի բնակիչները, Գյումրի ժամանող մեքենաների վարորդներն ու ուղևորները: Փողոցները ներթաղամասային են, հարակից՝ դպրոցներին և մանկապարտեզների: Բնակիչները հնարավորություն կունենան երթևեկել անվտանգ փողոցներով, իսկ հետիոտները՝ մաքուր և բարեկարգ մայթերով:Բարեկարգ փողոցների արդյունքում օդի աղտոտվածությունը ևս կնվազի, որն էլ անմիջականորեն դրական ազդեցություն կունենա բնակիչների առողջության վրա:
Նշել ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը	Ծրագրի իրականացման ընթացքում համայնքապետարանի կողմից ստեղծվող հիմնական աշխատատեղերի քանակը հինգն է, իսկ մասնավոր հատվածի (պետական գնումների համապատասխան ընթացակարգով հաղթող ճանաչված մասնակցի) կողմից ստեղծվող ժամանակավոր/հիմնական աշխատատեղերի քանակը ներկա պահին հստակ չէ:
Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը	

Նախորդ տարվա բյուջեն՝ 4089820452 ՀՀ դրամ .			
	Պլան	Փաստացի	Տոկոս
Ընդամենը համայնքի բյուջեի եկամուտները այդ թվում	4,089,820,452	4,037,638,396	98.7
-Վարչական բյուջեի եկամուտներ, որից	3,659,428,052	3,682,470,874	100.6
- Սեփական եկամուտներ	1,432,360,752	1,458,403,007	101.8
-Ֆոնդային բյուջեի եկամուտներ	110,965,200	105,644,522	95.2
Ընդամենը համայնքի բյուջեի ծախսեր, որից	4,429,126,173	3,808,935,318	86.0

- Վարչական բյուջեի ծախսեր	3,336,129,301	3,109,045,307	93.2
-Ֆոնդային բյուջեի ծախսեր	1,092,996,872	699,890,011	64.0
Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը, որից			
- ճանապարհաշինություն	704,729,472	530,821,161	75.3
- ջրամատակարարում			
- փողոցային լուսավորություն	15,603,000	15,207,600	97.5
- շենք շինութ. ձեռքբերում			
- այլ մեքենաներ և սարքավոր.	125,445,100	106,481,100	84.9

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն

Ընթացիկ տարվա բյուջե՝ 4512726000 ՀՀ դրամ ,

	Պլան
Ընդամենը համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում այդ թվում՝	4512726000
- Վարչական բյուջեի եկամուտներ, որից	4103563100
- սեփական եկամուտներ	1643866800
- Ֆոնդային բյուջեի եկամուտներ	102271500
Ընդամենը համայնքի բյուջեի ծախսեր, որից	5080726800
- Վարչական բյուջեի ծախսեր	3852924100
-Ֆոնդային բյուջեի ծախսեր	1227802700
Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը, որից	
- Շենքերի և շինությունների կառուցում	36,337,700
- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	617,970,600
- Տրանսպորտային սարքավորումներ	237,247,300
- Վարչական սարքավորումներ	17,759,800
- Այլ մեքենաներ և սարքավորումներ	282,827,300
-Աճեցվող ակտիվներ	5,340,000
- Նախագծահետազոտական ծախսեր	30,320,000

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ

Գյումրի համայնքի 2019 թվականի բյուջեի մուտքերի հաշվին սույն ծրագրի իրականացումը հնարավոր չէ: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ համայնքի բյուջեի ֆինանսական միջոցները գրեթե

ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով	ամբողջությամբ ուղղվում է համայնքի պարտադիր խնդիրների իրականացմանը: Ֆինանսական միջոցներից մի փոքր մաս էլ ուղղված է համայնքի կամավոր խնդիրների լուծմանը, որով փորձ է արվում ինչ-որ չափով մեղմելու համայնքի կարիքավոր և սոցիալապես խիստ անապահով բնակչության հոգսերը:
Ծրագրի ընդհանուր բյուջեն, այդ թվում՝ - շինարարական օբյեկտների նախագծման արժեքը _____ դրամ, - նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ _____ դրամ, - տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ _____ դրամ, - հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ _____ դրամ, - գոյություն ունեցող շենք-շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության արժեքը՝ _____ դրամ, ինչպես նաև առանձին ներկայացնել հասարակական շենքերի և բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման գույքի կառուցման/նորոգման դեպքում՝ էներգախնայողության միջոցառումների արժեքը _____ դրամ	*965 781 515(ինը հարյուր վաթսունհինգ միլիոն յոթ հարյուր ութսունմեկ հազար հինգ հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ (100%)* *15 360 000 (տասնհինգ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ* *17 410 905 (տասնյոթ միլիոն չորս հարյուր տասը հազար ինը հարյուր հինգ) ՀՀ դրամ* *5 398 597 (հինգ միլիոն երեք հարյուր իննսունութ հազար հինգ հարյուր իննսունյոթ) ՀՀ դրամ*
Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը	*434 601 682 (չորս հարյուր երեսունչորս միլիոն վեց հարյուր մեկ հազար վեց հարյուր ութսուներկու) ՀՀ դրամ դրամ (45 %)*
Այլ ներդրողներ	*0 դրամ (0 %), նշել ներդրողի անունը*
Ծրագրի իրականացման տևողությունը	*Սկիզբը հուլիս 2020 թ.* *Տևողությունը 5 ամիս*

Ծրագրի ծախսերը	*965 781 515 (ինը հարյուր վաթսունհինգ միլիոն յոթ հարյուր ութսունմեկ հազար հինգ հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ* *Կից ներկայացվում են նախագծա-նախահաշվայի փաստաթղթերը:*
Ամսաթիվ	**25 մայիս 2020 թ.**

Համայնքապետի գլխավոր խորհրդական/համայնքի տնտեսական զարգացման պատասխանատու
Հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստը

Կարապետ Մխչյան
+(374) 55 666 229
mkchyan88@gmail.com

Համայնքի ղեկավար Սամվել Բալասանյան
(անունը, ազգանունը)